Վիրտուալ կրթություն

ՀԲԸՄ՝ հայրենիքում համախմբված աշխարհասփյուռ պատվիրակները մասնակցեցին 1-ին հայկական վիրտուալ համալսարանի 3-րդ տարեդարձին: ՀԲԸՄ վիրտուալ համալսարանի գործունեությունը և ծրագրերը ներկայացրեց ՀԿՀ հիմնադիր Երվանդ Զորյանը: Երեք տարի առաջ վիրտուալ ուսուցման կենտրոնը ստեղծվեց հենց սփյուռքահայ ուսանողների համար: 7-միլիոնանոց հայկական սփյուռքի երիտասարդների միայն 5 տոկոսը հնարավորություն ունի հայկական կրթություն ստանալ իրենց բնակության երկրում: Մնացած 95 տոկոսի համար էլ հենց գործում է ՀԲԸՄ վիրտուալ համալսարանը: ՀԲԸՄ նորագույն ուսումնական հաստատությունն առաջարկում է հայկական առարկաների ուսուցում՝ սերտիֆիկացված ծրագրերով և կրեդիտավորված դասընթացներով: Վիրտուալ համալսարանն ունի երեք ֆակուլտետ՝ հայոց լեզվի, հայոց պատմության և հայ մշակույթի: ՀԿՀ ու շախմատի ակադեմիայի գործակցությամբ համալասարանը շուտով կունենա նաև շախմատային դասընթացների բաժին: Հայկական կրթությունն ամբողջ աշխարհում հասկանալի դարձնելու նպատակով համացանցային դասընթացները հասանելի են 6 լեզվով՝ հայերեն (արևելահայերեն և արևմտահայերեն), անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն և թուրքերեն: ՀԲԸՄ առցանց հայկական համալսարանն այսօր ունի ավելի քան 2000 ուսանող՝ 63 երկրներից: ՀՀ կրթության և գիտության նախարարությունն էլ նախատեսում է համահայկական վիրտուալ համալսարանին տալ պետական արտոնագիր:

Այց ԱԺ

ՀԲԸՄ Ընդհանուր ժողովի շրջանակներում միության պատվիրակները գլխավորությամբ ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանի և կենտրոնական վարչական ժողովի անդամների այցելեցին ՀՀ Ազգային ժողով և հանդիպեցին ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հետ: ԱԺ նիստերի դահլիճում ՀԲԸ միության պատվիրակներն ու ՀՀ ԱԺ նախագահը խոսեցին միության գործունեության ու ապագա ծրագրերի մասին:

Այց հիշողության կոթող

Սփյուռքի յուրաքանչյուր հայի համար Ծիծեռնակաբերդ այցը նվիրական իրող է, տարիների փափագած երազանք, որը ՀԲԸՄ 300 պատվիրակների համար ևս մեկ անգամ դարձավ իրականություն: ՀԲԸՄ ներկայացուցիչները Ծիծեռնակաբերդ այցելեցին միության նախագահ Պերճ Սեդրակյանի գլխավորությամբ: Անմար կրակի մոտ՝ աղոթք՝ զոհերի հիշատակին, ու ամենախոս «Տե՛ր, ողորմյա»...

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում սփյուռքահայ պատվիրակներին ընդունեց թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանը: 1995-ին թանգարան-ինստիտուտը ստեղծվել է հենց ՀԲԸՄ գործուն աջակցությամբ: Հայկական բարեգործականի միջոցներով ձեռք են բերվել նաև ցեղասպանության վերաբերյալ հազվագյուտ գրքեր, վավերագրեր ու փաստաթղթեր:

ՀԲԸՄ-ն իր տեղն ունի նաև Ծիծեռնակաբերդի հուշածառերի պուրակում: Բազմաթիվ երկրների ղեկավարների ու միջազգային պատվիրակությունների ծառերի կողքին աճում է նաև Հայկական բարեգործականի հուշածառը: ՀԲԸՄ պատվիրակները ջրեցին համահայկական կազմակերպության խորհրդանշական եղևնին՝ հերթական անգամ փաստելով անցյալը հիշելու և ապագան կառուցելու մշտարթուն ու միասնական պատրաստակամությունը: